



## ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան

4 օգոստոսի 2021թ.

### 2021 թվականի վիճակագրական ծրագրի կատարման ընթացքի մասին

Վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՍԱՏ), համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի<sup>1</sup> 14, 15 և 16-րդ հոդվածների դրույթներով սահմանված պահանջների, ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 2021 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեությունը ծավալել է ըստ «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների հնգամյա վիճակագրական ծրագրի»<sup>2</sup> (Հնգամյա ծրագիր) և «2021 թվականի վիճակագրական ծրագրի»<sup>3</sup> (Տարեկան ծրագիր):

Տարեկան ծրագրով ըստ ծածկագրերի 2021թ.-ի առաջին կիսամյակի համար նախատեսված թվով 308 անուն, հաճախականությունը հաշվի առած՝ 1 003 միավոր, վիճակագրական աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում (2020թ.-ի առաջին կիսամյակում, համապատասխանաբար՝ 312 անուն և 1 005 միավոր):

Տարեկան ծրագրով նախատեսված 2021թ.-ի առաջին կիսամյակի միջոցառումները ֆինանսավորվել են ՀՀ պետական բյուջեից, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների միջոցների հաշվին:

Բյուջետային հայտերի հիման վրա դրամարկղային ծախսը 2021թ.-ի առաջին կիսամյակում կազմել է 1 025 791.92 հազ. դրամ:

Տեղեկատվահրատարակչական գործունեության մասով ԱՐՄՍՍԱՏ-ը 2021թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում հրապարակել է 14 անուն վիճակագրական տեղեկագիր (հաճախականությունը՝ ամսական, եռամսյակային, կիսամյակային և տարեկան, հաշվի առած՝ 32), «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի 6 անուն թողարկում (հայերեն և ռուսերեն), 8 անուն մամուլի հաղորդագրություն (պարբերականությունը հաշվի առած՝ 21), որոնք զետեղված են

<sup>1</sup> Ուժի մեջ է 09.04.2018թ.-ից (ՀՕ-194-Ն, ՀՀՊՏ, 2018.03.28/23(1381), Հոդ.387)

<sup>2</sup> Տես՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 31.10.2018թ. № 61-Ն որոշում, ՀՀԳՏ 2018.11.15/28(631), Հոդ.255

<sup>3</sup> Տես՝ ՀՀ ՎՊԻ 2020թ. դեկտեմբերի 28-ի № 23-Ն որոշում, Միասնական կայք 2020.12.28-2021.01.10, Պաշտոնական հրապարակման օրը՝ 29.12.2020թ.:



1999թ. ապրիլից գործող ԱՐՄՍՍՍՍ-ի [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքում, ինչպես նաև տեղադրված են ԱՐՄՍՍՍՍ-ի բաց գրադարանում (գրադարանային ֆոնդը 01.07.2021թ.-ի դրությամբ կազմել է 13 299 միավոր):

Տարեկան ծրագրով նախատեսված 4 վիճակագրական հետազոտությունների դաշտային աշխատանքներն իրականացման փուլում են: Դրանցից 2-ը՝ «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն»-ը և «Տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի ընտրանքային հետազոտություն»-ն իրականացվում են ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին:

Մյուս 2 հետազոտություններից՝ «Ժամանակի օգտագործման հետազոտություն»-ն իրականացվում է «ՄԱԿ Կանայք»-ի (ՄԱԿ-ի գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց) ֆինանսավորման հաշվին, իսկ «Սեռով պայմանավորված ընտանեկան բռնության վերաբերյալ միանգամյա ընտրանքային հետազոտություն տնային տնտեսություններում»-ը՝ Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակում:

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում պատրաստվել և մշակվել են «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021», «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021», «Հայաստանը թվերով, 2021» և «Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2021» վիճակագրական ժողովածուների նախագծերը:

Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու և նրանցից դիտողություններ ու առաջարկություններ ստանալու ակնկալիքով 2021թ. հունիսի 16-ին [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքում զետեղվել է նաև «2022 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը (տես՝ <https://www.armstat.am/file/doc/99524628.pdf> հղումը):

Ըստ Google Analytics հաշվիչի գրանցումների, 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱՐՄՍՍՍՍ-ի [www.armstat.am](http://www.armstat.am) պաշտոնական կայքում գրանցվել է 231 260 դիտում և ընթերցվել 1 252 072 էջ, իսկ [www.armstatbank.am](http://www.armstatbank.am) կայքում՝ գրանցվել է 15 826 դիտում և ընթերցվել 65 780 էջ:

ՀՀ կառավարության 13.05.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N° 1115-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N° 751-Ն որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետության հերթական մարդահամարը հետաձգվել է և անց է կացվելու 2022թ. հոկտեմբերի 13-22-ն ընկած ժամանակահատվածում:

Լրամշակվել է Հայաստանի Հանրապետությունում 2022թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մեքենայական մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցը, համաձայն որի կազմակերպվել և իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ:

2021թ.-ի առաջին կիսամյակում իրականացվել են թվով 138 որակի հոշակագրերի արդիականացման և բարելավման աշխատանքներ, ինչպես նաև մշակվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության վիճակագրություն» որակի նոր հոշակագիրը, որը թարգմանվել է նաև անգլերեն:

Իրականացվել են ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում առկա Ընդհանուր վիճակագրական բիզնես գործընթացի մոդելի (GSBPM) հենքով (հայերեն և անգլերեն) փաստաթղթավորված վիճակագրական արտադրանքների վիճակագրական գործընթացների (տես՝ <https://armstat.am/am/?nid=373> հղումը) և դրանց սխեմատիկ պատկերների (տես՝ <https://www.armstat.am/am/?nid=672> հղումը) արդիականացման, բարելավման և խմբագրական աշխատանքներ:

Իրականացվել են ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքում առկա եռալեզու վիճակագրական բառարանի (տես՝ <https://www.armstat.am/am/?nid=29> հղումը), որակի բառարանի (տես՝ <https://www.armstat.am/am/?nid=751> հղումը) և Փորձառության օրենսգրքի բառարանի (տես՝ <https://www.armstat.am/am/?nid=786> հղումը) արդիականացման, խմբագրման, նոր հասկացություններով համալրման և թարգմանության աշխատանքներ:

Իրականացվել են ԱՐՄՍՍԱՏ-ի 2021-2023թթ. Մեթատվյալների մշակման ծրագրի լրամշակման և բարելավման աշխատանքներ և փաստաթուղթը զետեղվել է ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքում հայերեն և անգլերեն (տես՝ <https://armstat.am/am/?nid=828> հղումը):

ԱՐՄՍՍԱՏ-ում ներդրման նպատակով շարունակվել են Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) ուսումնասիրության աշխատանքները, ինչպես նաև իրականացվել են GAMSO-ի համապատասխան ԱՐՄՍՍԱՏ-ի գործունեության փորձնական նկարագրության և փաստաթղթավորման լրամշակման, խմբագրման և արդիականացման աշխատանքները:

Շարունակվել են ԱՐՄՍՍԱՏ-ում Եվրամիության Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) ներդրման և դրա հիման վրա որակի հաշվետվությունների կազմման աշխատանքները: ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքում զետեղվել է «Սպառողական գների ինդեքս» վիճակագրական արտադրանքը՝ մշակված SIMS-ի հիման մեթատվյալների ստանդարտներով, հայերեն և անգլերեն (տես՝ <https://armstat.am/am/?nid=836> հղումը):

ԱՐՄՍՍԱՏ-ը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական և խորհրդատվական օժանդակություն:

2021թ. առաջին կիսամյակում, միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում իրականացվել է 182 առցանց միջոցառում (տեսակոնֆերանսներ, վեբինարներ, վեբեքսներ, դասընթացներ, Skype-ով հանդիպումներ, առցանց հանդիպումներ, ֆորումներ, շնորհանդեսներ, հարցազրույցներ, նիստեր և այլն), որին ԱՐՄՍՍԱՏ-ի աշխատակիցների մասնակցությունը կազմել է 527 միավոր:

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում միջազգային վիճակագրական համագործակցության շրջանակում ՀՀ-ում իրականացվել է 7 միջոցառում, որոնց մասնակցել է ԱՐՄՍՍԱՏ-ի 9 աշխատակից: 2021թ. մայիս-հունիս ամիսներին ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից կազմակերպվել է թվով 7 միջոցառում, որոնց մասնակցել է 56 աշխատակից, իսկ 18 աշխատակից մասնակցել է ք. Մոսկվայում կազմակերպված 5 միջոցառման:

2021թ. հունիսի 25-ի ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 69-րդ լիակազմ նստաշրջանում ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահ Ստեփան Մնացականյանը 4-րդ անգամ՝ 2 տարի ժամկետով, վերընտրվել է որպես Բյուրոյի փոխնախագահ: 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահն առցանց մասնակցել է Բյուրոյի աշխատանքներին:

2021թ. առաջին կիսամյակում շարունակվել են ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքում տեղադրված Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների ազգային հաշվետվողականության հարթակի տվյալների արդիականացման և կատարելագործման աշխատանքները (տես՝ <http://sdg.armstat.am/am/> հղումը): Սույն հարթակը հանդիսանում է ազգային վիճակագրության, մեթատվյալների և հարակից տեղեկատվության գործիք՝ գլոբալ ԿԶՆ-ի ցուցանիշների համար:

Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» թիվ TFOA4543 դրամաշնորհային ծրագրի շրջանակում մշակվել է «ԱՐՄՍՍԱՏ-ի էլեկտրոնային

հաշվետվությունների հավաքման, պահպանման և մշակման վեբ-հարթակի» տեխնիկական առաջադրանքը, ինչի ներդրումը հնարավորություն կտա թվայնացնել ռեսպոնդենտների գործունեության մասին տվյալների հավաքման, մշակման, պահպանման, վերլուծության, վիզուալիզացիայի (տեսապատկերավորման) և տարածման ամբողջ ցիկլը: Այս գործընթացների թվայնացումն ավելի արդյունավետ և թափանցիկ կդարձնի ԱՐՄՍՍՍՍ-ի աշխատանքը, կմիավորի վերջինիս բոլոր բիզնես-գործընթացները մեկ տեղեկատվական դաշտում, կբարձրացնի հավաքվող տվյալների ճշգտությունը և կբարելավի ռեսպոնդենտների հարաբերություններն ԱՐՄՍՍՍՍ-ի հետ:

Համաշխարհային բանկի վերոնշյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակում ԱՐՄՍՍՍՍ-ի 4 մարզային վարչություններում (Արագածոտնի մարզային վարչություն՝ ք. Աշտարակի գրասենյակ, Կոտայքի մարզային վարչություն՝ ք. Եղվարդի գրասենյակ, Տավուշի մարզային վարչություն՝ ք. Իջևանի գրասենյակ և Վայոց ձորի մարզային վարչություն՝ ք. Վայքի գրասենյակ) 2021թ. մարտի 10-ին ավարտվել են վերանորոգման և կորպորատիվ ու տեղական տեղեկատվական տեխնոլոգիաների ցանցերի արդիականացման աշխատանքները:

Նույն դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2020թ. դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրի համաձայն, 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել են «Սեռով պայմանավորված բռնության ընտրանքային հետազոտության» և «Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի (ներքին և արտաքին շուկա) հետազոտության» դաշտային աշխատանքները:

Վերոնշյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2021թ. փետրվարի 19-ին կնքված պայմանագրի համաձայն, իրականացվել են «Գյուղատնտեսության կառուցվածքային հետազոտության և անհատական բնակարանային շինարարության հետազոտության» դաշտային աշխատանքները:

Համաշխարհային բանկի վերոնշյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2021թ. հունիսի 15-ին կնքվել է պայմանագիր ԱՐՄՍՍՍՍ-ի տեխնիկական հագեցվածության գործողության շրջանակում համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով:

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել է թվով 220, իսկ ԵԱՏՀ վիճակագրության դեպարտամենտին՝ 163 վիճակագրական հարցաթերթ:

2021թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ԱՐՄՍՍՍՍ-ն ուսումնասիրտարական պրակտիկա է կազմակերպել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի թվով 21 ուսանողի համար:

«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի դրույթներին համապատասխան 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում շարունակվել է վիճակագրությանը վերաբերող իրավական դաշտի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Այդ նպատակով հրավիրվել է ՀՀ ՎՊԽ թվով 9 նիստ և արդյունքում ընդունվել թվով 26 որոշում, դրանցից 9-ը՝ նորմատիվ, որոնք սահմանված կարգով գրանցվել են Արդարադատության նախարարության կողմից ու հրապարակվել, իսկ 17-ը՝ անհատական: Ընդունված նորմատիվ որոշումներով հաստատվել են վիճակագրական դիտարկման փաստաթղթեր, փոփոխություններ են կատարվել գործող վիճակագրական փաստաթղթերում, ուժը կորցրած են ճանաչվել արդիականությունը կորցրած վիճակագրական փաստաթղթեր, ինչպես նաև կարգավորվել են վիճակագրական բնագավառի այլ հարցեր:

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ԱՐՄՍՏԱՏ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում փաստաթղթաշրջանառության թվային պատկերը հետևյալն է. մտից թղթակցություն՝ 2 772 և ելից թղթակցություն՝ 977 միավոր:

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում կազմել է 3 749 միավոր:

ԱՐՄՍՏԱՏ-ի նախագահի կողմից 2021թ. առաջին կիսամյակի ընթացքում վերահսկողություն է սահմանվել 307 փաստաթղթի (օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետ պարունակող փաստաթղթեր) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում:

## **ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ**

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ 011 523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին